# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 օգոստոսի 2025 թվականի N 515-Ա

## <<ԻՄԻՋ Մ. Գ. >> ՍՊԸ-ԻՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի և Վարդենիս համայնքի ավագանու 24.01.2025 թվականի N 2-Ն որոշման դրույթներով և հիմք ընդունելով <<ԻՄԻՋ Մ. Գ. >> ՍՊԸ-ի տնօրեն Աշոտ Կարապետյանի 30/07/2025 թվականի դիմում-հայտը որոշում եմ՝

1.Թույլատրել <<ԻՄԻՋ Մ. Գ.>> ՍՊԸ-ին Վարդենիս քաղաքի Երևանյան փողոցի 1/2 հասցեում, հանրախանութի մոտ գտնվող գովազդային վահանակի վրա Ա կողմում 18 ք/մ մակերեսով տեղադրված գովազդի ժամկետը երկարաձգել՝ մինչև 31/08/2025 թվականը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2025թ. օգոստոսի 11
ք. Վարդենիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

13 օգոստոսի 2025 թվականի N 516-Ա

**ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-055-0002-0077 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Կարինե Հարությունյանի դիմումը **որոշում եմ.**

1..Վարդենիս համայնքի Կարճաղբյուր բնակավայրի 2-րդ փողոցի 4-րդ փակուղու 05-055-0002-0077 ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Կարճաղբյուր բնակավայրի 2-րդ փողոց 4-րդ փակուղի 5 բնակելի տուն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025թ. օգոստոսի 13
ք. Վարդենիս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N 517-Ա

### <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԵՎ ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԻՉ ՑԱՆՑ>> ՓԲԸ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-065-0078-0002 ԾԱԾԿԱԳՐՈՎ << ՀԵՌՈՒՍՏԱԿԱՅԱՆԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔ>> ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,44 ՀԱ <<ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ>> ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ <<ԿԱՊԻ ՕԲՅԵԿՏԻ ՀՈՂԵՐԻ>> ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության կառավարության>> 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված <<ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի>> 2022 թվականի հունիսի 30-ի N 2-32 եզրակացությունը, Վարդենիս համայնքի ավագանու 30/11/2022թN 114-Ա որոշումը և <<Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց>> ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Նարեկ Ադամյանի դիմումը որոշում եմ.

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված <<Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց>> ՓԲԸ-ի սեփականություն հանդիսացող (Սեփականության իրավունքի գրանցման N 2129427 վկայական) հեռուստակայանի սպասարկման տարածք նպատակային նշանակության 0,44 հա <<հասարակական>> նպատակային նշանակության հողամասը փոփոխել <<կապի օբյեկտի հողերի>> նպատակային նշանակության՝ համապատասխանեցնելով գլխավոր հատակագծին;

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025թ. օգոստոսի 13
ք. Վարդենիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N 518-Ա

## <<ՖԻՆՔԱ>> ՈՒՎԿ ՓԲԸ-ԻՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի և Վարդենիս համայնքի ավագանու 24.01.2025 թվականի N 2-Ն որոշման դրույթներով և հիմք ընդունելով «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի Վարդենիսի մասնաճյուղի ղեկավար Շավարշ Հակոբյանի դիմում-հայտը՝ որոշում եմ.

Թույլատրել «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ԻՆ Վարդենիս քաղաքի Հ. Ադրեասյան փողոցի 6/5 հասցեում տեղադրել 11 ք/մ մակերեսով արտաքին գովազդ՝ մինչև 31/12/2025 թվականը:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025թ. օգոստոսի 13
ք. Վարդենիս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 օգոստոսի 2025 թվականի N 519-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ 12.07.2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 62 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 19 մարտ 2015 թվականի N 596 որոշմամբ հաստատված կարգը և <<ԿԱՊԱՎՈՐ>> ՍՊԸ տնօրենի Գ. Չլինգարյանի 08.08.2025 թվականի N068-Ն գրությունը ` որոշում եմ.

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանին Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի Վիկտոր Համբարձումյան փողոցի ասֆալտապատման աշխատանքներին տրված 12.07.2023 թվականի թիվ 62 շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգել մինչև 15.11.2025 թվականը:

Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման և հողաշինության բաժնի վրա:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025թ. օգոստոսի 15
ք. Վարդենիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 օգոստոսի 2025 թվականի N 520-Ա

## ՆԱՐԻՆԵ ԱԼԲԵՐՏԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ <<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 11-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Աշխատանքային օրենսգրքի>> 94-րդ հոդվածի 2-րդ, 95-րդ հոդվածի 2-րդ կետերի, ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 26.03.2020թ. թիվ 02-Ն հրամանով հաստատված կարգի>> 84-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Նարինե Մինասյանի անձնական դիմումը՝ որոշում եմ.

1.Նարինե Ալբերտի Մինասյանին 2025 թվականի օգոստոսի 15-ից նշանակել <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 2 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ մինչև մրցույթով տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի հիմքի վերացումը:

2.Աշխատավարձ՝համաձայն սահմանված դրույքաչափի:

3.Դադարեցնել նույն ՀՈԱԿ-ի երաժշտության դաստիարակ Լուսինե Մինասյանին վերապահված <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 2 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025թ. օգոստոսի 15
ք. Վարդենիս